ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանում **09.04.2015թ** տեղի ունեցած մարզխորհրդի նիստի

Մասնակցում էին
Ս.Սահակյան **ՀՀ Արագածոտնի մարզպետ**
Ն. Մովսիսյան **մարզպետի տեղակալ**
Մ Աբգարյան **մարզպետի տեղակալ**
Հ.Գևորգյան **մարզպետարանի աշխատակազմի ղեկավար**
Հ.Օհանյան **ՀՀ ՏԿԱԻ նախարարության վարչական վերահսկողության բաժնի պետ**
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ
ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների ղեկավարներ
ՀՀ Արագածոտնի մարզի ԲԿ ղեկավարներ
ՀՀ ԱԻՆ Արագածոտնի փրկարարական վարչության ներկայացուցիչներ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

ՀՀ Արագածոտնի մարզի խորհրդի նիստի

09.04.2015թ. **ժ. 11.00**

1. Հայոց Մեծ Եղեռնի 100 ամյակին նվիրված ՀՀ Արագածոտնի մարզի միջոցառումների ծրագրի իրականացման ընթացքի մասին /զեկ.՝ մարզպետարանի աշխատակազմի Կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատար Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ/:
2.
3. Մարզի համայնքներում 2015 թվականի մայիսի 1-ից սանիտարական միամսյակ հայտարարելու և հետագա աշխատանքները պատշաճ կազմակերպելու մասին /զեկ.՝ մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. ԴԱՎԱՅԱՆ/:
4. Մարզում նոր աշխատատեղերի ստեղծման նպատակով, համապատասխան ծրագրերի առկայության դեպքում, կազմակերպություններին , ձեռնարկություններին, ընկերություններին վարկերի տրամադրման հնարավորության քննարկման մասին /զեկ.՝ մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի բաժնի պետ՝ Ի. ԲԱՐՍԵՂՅԱՆ/:
5. Մարզի համայնքների բյուջեների կատարման և սեփական եկամուտների հավաքագրման գործընթացի մասին /զեկ.՝ մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն.ԳԱԼՍՏՅԱՆ/:
6. Վերջին 10-15 տարում մարզում քաղաքացիների կողմից սեփական հողերից հրաժարվելու դեպքերի և այդ հողերի հետագա տնօրինման օրինականության մասին/զեկ.՝ մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Գ. ՕՀԱՆՅԱՆ/:
7. Հայտարարություններ

Ապրիլի 9-ին կայացավ Արագածոտնի մարզխորհրդի հերթական նիստը: Օրակարգային առաջին հարցը վերաբերում էր Հայոց Մեծ Եղեռնի 100 ամյակին նվիրված միջոցառումների ծրագրի իրականացման ընթացքին: Ներկայացվեց, որ աշխատանքները համակարգում է մարզպետ Սարգիս Սահակյանի ղեկավարությամբ ստեղծված մարզային հանձնաժողովը: Կազմված միջոցառումների ժամանակացույցի համաձայն մարզի բոլոր համայնքներում, կրթական, մշակութային, հասարակական կազմակերպություններում իրականացվում են շարադրությունների, նկարների ցուցանանդեսներ, երգի, ասմունքի մրցույթներ, թեմատիկ դասախոսություններ, կլոր սեղաններ, հիշատակի և ոգեկոչման արարողություններ: Միջոցառումների գործընթացը համակողմանի անցկացնելու համար մաքրվում, բարեկարգվում են համայնքներում գտնվող մշակութային կոթողների, հուշարձանների շրջակայքը, միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհները, տարածքները: Այդ նպատակով մարզպետի հանձնարարությամբ ընթանում է սանիտարական միամսյակը, որն արդեն ավանդական է դարձել:

Մարզում նոր աշխատատեղերի ստեղծման նպատակով համապատասխան ծրագրերի առկայության դեպքում կազմակերպություններին , ձեռնարկություններին, ընկերություններին վարկերի տրամադրման հնարավորության քննարկման ժամանակ մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի բաժնի պետ՝ Ի. Բարսեղյանը կարևորեց մասնավոր ներդրումների խթանման միջոցառումների կազմակերպման և գերակա ոլորտների/գյուղմթերքների վերամշակում և իրացում , զբոսաշրջություն/ զարգացման ծրագրերի մշակման հարցը: Ի.Բարսեղյանը համայնքի ղեկավարներին առաջարկեց կազմել տարածաշրջանային և մարզային ներդրումային առաջարկների փաթեթներ և տեղացի և օտարերկրյա ներդրողների համար պարբերաբար կազմակերպել իրազեկման միջոցառումներ:

Օրակարգային հարցերից էր նաև համայնքների բյուջեների կատարման և սեփական եկամուտների հավաքագրման գործընթացի մասին հաղորդումը: Մարզխորհրդի նիստի մասնակիցները տեղեկացան, որ առաջին եռամսյակի կտրվածքով սեփական եկամուտները, ընդհանուր առմամբ, կատարվել է 17,3 %-ով: Այդ թվում՝ Աշտարակի տարածաշրջանում՝ 17,6, Ապարանում՝ 19,5, Արագածում՝ 12,3 և Թալինում՝ 17,8% Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն.Գալստյանը դիմեց այն համայնքի ղեկավարներին, որտեղ ցուցանիշները գոհացուցիչ չէին և հարցի լուծման համար առաջարկեց ձեռնարկել համապատասխան միջոցառումներ: Ն.Գալստյանը անդրադարձավ նաև գնումների գործընթացի կազմակերպման հարցերին:

Վերջին 10-15 տարում մարզում քաղաքացիների կողմից սեփական հողերից հրաժարվելու դեպքերի և այդ հողերի հետագա տնօրինման օրինականության մասին հարցերին անդրադարձավ մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Գ. Օհանյանը: Նա համայնքի ղեկավարներին առաջարկեց ևս մեկ անգամ ճշտել և մարզպետարան ներկայացնել համապատասխան ցուցակները:

Ելույթով հանդես եկավ նաև մարզպետի տեղակալ Մուշեղ Աբգարյանը և ներկայացրեց համայնքներում իրականացված մանիթորինգի արդյունքում արձանագրված խախտումները: Աբգարյանը առաջարկեց հետևողական լինել և պարբերաբար տեղեկատվություն ներկայացնել համայնքներում կազմակերպվող ծառատունկի, վարձակալական հողերի պայմանագրերի կնքման և դրանց վճարումների վերաբերյալ:

Մարզխորհրդի նիստի աշխատանքներն ամփոփեց մարզպետ Սարգիս Սահակյանը: Նա համայնքների ղեկավարներին հորդորեց առավել ուշադիր և հետողական լինել Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառումների անցկացմանը, ըստ ամենայնի նախապատրաստվել համայնքներում այդ օրերին արտերկրից սպասվելիք բազմաթիվ հյուրերի այցելություններին: Նա նաև կարևորեց սեփական եկամուտների հավաքագրման, լոլիկի արտադրությանը նպաստող աշխատանքների կազմակերպման, ինչպես նաև ազոտական պարարտանյութի և դիզելային վառելիքի ձեռքբերման գործընթացները ժամանակին և կյազմակերպված իրականացնելը: Մարզպետը նաև բարձրացրեց գարնանային վարարումների արդյունքում խմելու ջրի որակական հատկանիշների ապահովման, այդ նպատակով իրականացվելիք ընթացիկ աշխատանքների հարցը:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ